ՑԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ
ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌՋԵՎ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ԵՎ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՊՐԻԼՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ

Ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի նահատակների հիշատակի ոգեկոչման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմական առաջնորդներ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական այրեր և օտարերկրյա դիվանագետներ:

Այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը: Հընթացս Սրբազան արարողության պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

«Մահը ամենասարսափելին չէ, որ պիտի պատահի մարդու որդիներին, ավելի սարսափելին մոռացումն է, մահվան կյանքը: Մոռացումով մոռացվում են թե՛ մոռացվածը և թե՛ մոռացողը: Արդ, ապրիլ 24-ի նահատակների հիշատակով հիշվում ենք նաև մենք, որ ուխտադիր ենք ապրելու համար մեռնել և ընդհանուր շահի առջև մոռանալ մեր անձնականն ու այն ամենը, որ մեզ հեռացնում և շեղում է ճշմարիտ ուղուց»,- նշեց Արշակ վարդապետն իր քարոզում (տե՛ս էջ 39):

Պատարագի Սրբազան արարողությունից հետո Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Մեծ եղեռնի նահատակների հիշատակին կանգնեցված աղոթքի և ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Հոգեհանգստին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Անդրկովկասում Վատիկանի դեսպան և պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտին և բազմաթիվ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ